ԲԱԺԻՆ 3. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ
РАЗДЕЛ 3: МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ
SECTION 3: TEACHING METHODICS

DOI: 10.46991/ai.2022.8.124 **https://orcid.org/0000-0002-8482-7683**

FEATURES OF THE APPLICATION OF THE MODERN METHODOLOGICAL METHOD OF T-SHAPED TRAINING

Armenuhi Arzumanyan
Ph.D., Associate Prof.
Yerevan State University, Հայաստան
armenuhiarzumanyan@mail.ru

Summary

In the article entitled "Features of the application of the modern methodological technique of T-shaped learning", we tried to show the features of the application of this methodological technique, due to the nature of the taught material and the originality of the writer's image system, the age groups of students. We have considered several approaches to the application of the methodological technique..

The purpose of the article is to reveal, with the help of interesting observations, the essence of the above-mentioned methodological technique, the principles of teaching material in this format, indicating and justifying the advantages due to the relevant features of this teaching method, the features arising from the purpose of teaching.

The novelty of the research is the consideration of various approaches to the application of the modern methodological technique of T-shaped learning, their features. By the above-mentioned method, the symbols in the artwork were examined; their philosophical and psychological layers were emphasized.

The relevance of the research determines the consideration of the process of teaching literary works by the requirements of modern teaching methodology, which makes it consonant with modern educational programs. In the article, we have demonstrated the effectiveness of using the modern methodological technique of T-shaped learning in various approaches, the possibility of using them for more meaningful and multi-level teaching of a work of art.

As a result of the research, we came to the following conclusions: the use of a T-shaped methodical technique contributes to a deeper analysis of the taught material, a comprehensive and comprehensive knowledge of the material by students, a broad presentation of the artwork, makes the lesson more interesting and meaningful.

Key words and phrases: adviser, ideological issues, means of icon painting, philosophical layers.

ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ СОВРЕМЕННОГО МЕТОДИЧЕСКОГО ПРИЕМА Т-ОБРАЗНОГО ОБУЧЕНИЯ

Арзуманян Арменуи
Канд.фил.наук., доцент
Ереванский государственный университет, Армения
armenuhiarzumanyan@mail.ru

Аннотация

В статье под названием «Особенности применения современного методического приема Т-образного обучения» мы попытались показать особенности применения этого методического приема, обусловленные характером преподаваемого материала и своеобразием образов в произведениях писателя, а также возрастными группами учащихся. Мы рассмотрели несколько подходов к применению этого методического приема.

Цель статьи – с помощью интересных наблюдений раскрыть сущность вышеуказанного методического приема, принципы преподавания материала в данном формате, указав и обосновав преимущества, обусловленные соответствующими особенностями этого метода обучения, и рассмотреть особенности приема, вытекающие из цели обучения.

Новизна исследования – рассмотрение различных подходов к применению современного методического приема Т-образного обучения, их особенностей. Вышеназванным методом были рассмотрены символы в художественном произведении, акцентированы их философские, психологические слои.

Актуальность исследования обусловливает рассмотрение процесса обучения литературных произведений в соответствии с требованиями современной методологии обучения, что делает его созвучным современным образовательным программам. В статье мы продемонстрировали эффективность применения современного

методического приема Т-образного обучения в различных подходах, возможность с его помощью более содержательного и многоуровневого изучения художественного произведения.

В результате исследования мы пришли к следующим выводам: применение Т-образного методического приема способствует более глубокому анализу преподаваемого материала, всестороннему и всеобъемлющему знанию материала учащимися, широкому представлению художественного произведения, делает урок более интересным и содержательным.

Ключевые слова и словосочетания: советник, идеологические вопросы, средства иконописи, философские слои.

«Т- ԱՁԵՎ ԱՂՅՈՒՍԱԿ» ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՆԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արզումանյան Արմենուհի
բան. գիտ.թեկն., դոցենտ
Երևանի պետական համալսարան, Հայաստան
armenuhiarzumanyan@mail.ru

««Т-աձև աղյուսակ» ուսուցման ժամանակակից մեթոդական հնարի կիրառման առանձնահատկությունները» վերտառությամբ հոդվածում փորձել ենք ցույց տալ մեթոդական այդ հնարի կիրառման յուրահատկությունները՝ պայմանավորված ուսուցանվող նյութի բնույթով, գրողի պատկերային համակարգի ինքնատիպությամբ ու աշակերտների տարիքային խմբերով: Դիտարկել ենք մեթոդական հնարի կիրառման մի քանի մոտեցումներ:

Հոդվածի նպատակն է հետաքրքիր դիտարկումներով բացահայտել վերոնշյալ մեթոդական հնարի էությունը, տվյալ ձևաչափով նյութի ուսուցման սկզբունքները՝ մատնանշելով ու հիմնավորելով դասավանդման այդ եղանակի համապատասխան առանձնահատկություններով պայմանավորված առավելությունները, ուսուցման նպատակից բխող յուրահատկությունները:

Հետազոտության նորույթն է «Т-աձև աղյուսակ» ժամանակակից մեթոդական հնարի կիրառման տարբեր մոտեցումների, դրանց առանձնահատկությունների դիտարկումը: Վերոնշյալ մեթոդով քննարանվել են գեղարվեստական երկում խորհրդապատկերները, շեշտադրվել են նրանց խոհափիլիսոփայական, հոգեբանական շերտերը:

Հետազոտության արդիականությունը պայմանավորում է ուսուցման ժամանակակից մեթոդաբանության պահանջներով դիտարկել գրական երկերի ուսուցման գործընթացը՝ այն դարձնելով ժամանակակից կրթական ծրագրերին համահունչ: Հոդվածում ցույց ենք տվել «Т-աձև աղյուսակ» ուսուցման ժամանակակից մեթոդական հնարի տարբեր մոտեցումներով կիրառման արդյունավետությունը, դրանց օգնությամբ գեղարվեստական ստեղծագործության առավել բովանդակային ու բազմաշերտ ուսումնասիրության հնարավորությունները:

Հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին. «Т-աձև աղյուսակ» մեթոդական հնարի կիրառումը նպաստում է ուսուցանվող նյութի առավել խորքային վերլուծությանը, աշակերտների կողմից նյութի բազմակողմանի ու ընդգրկուն իմացությանը, գեղարվեստական ստեղծագործության լայնածավալ ներկայացմանը, դասը առավել հետաքրքիր ու բովանդակալից դարձնելուն:

Բանալի բառեր: Խորհրդապատկեր, գաղափարական հարցադրումներ, պատկերակերտման միջոցներ, խոհափիլիսոփայական շերտեր:

Հիմնական նյութի շարադրանք: Հոդվածի նպատակն է հետաքրքիր դիտարկումներով բացահայտել «Т-աձև աղյուսակ» մեթոդական հնարի էությունը, դրա տարբեր մոտեցումներով իրառման հնարավորությունները, որոնք պայմանավորում են ուսուցանվող նյութի բազմաշերտ ուսումնասիրություն:

Հետազոտության հիմնախնդիրն է բացահայտել «Т-աձև աղյուսակ» ժամանակակից մեթոդական հնարի կիրառման առանձնահատկությունները, մեթոդի՝ որպես ուսուցման հետաքրքիր ձևի առավելությունները՝ նյութի առավել խորքային վերլուծության հնարավորություն, անցած նյութի համակարգում ու ամփոփում, գրողի պատկերային համակարգի ինքնատիպության շեշտադրում:

Մեթոդական գրականության մեջ կան վերոնշյալ հիմնախնդրին նվիրված գիտական մի շարք հետազոտություններ՝ «Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ» (ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր, 2008), «Ուսուցման արդյունավետ հնարներ» (Ս. Խաչատրյան, «Էր. Ֆ. Էբերտ հիմնադրամ», Հայաստան, 2020), «Technology for literacy teaching and learning» (Valmont W., New York, Houghton Mifflin Company, 2006), «Classrooms that work» (Allington R. And Cunningham P., Boston, Allyn and Bacon, 2004): Նշված աշխատությունների հեղինակները փորձել են յուրովի ներկայացնել ուսուցման ժամանակակից մեթոդներին բնորոշ առանձնահատկությունները, կիրառման յուրահատկությունները:

Հետազոտական հարցը «Տ-աձև աղյուսակ» ժամանակակից մեթոդական հնարի առանձնահատկությունների դիտարկումն է:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Սույն ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել մանկավարժներին ու ուսանողներին նմանօրինակ հետազոտություններ կատարելիս:

Ուսուցման ժամանակակից մեթոդական հնարներից է «Տ-աձև աղյուսակը», որը կիրառվում է՝ միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Սա գծագրական դասակարգիչներից ամենապարզն է և՛ կազմակերպման ձևով, և՛ կառուցվածքով: Այն կարելի է կիրառել անհատապես կամ խմբով աշխատելիս: Տ տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության կամ երևույթի տարբեր կողմերը [1, 69]: «Տ-աձև աղյուսակ» կարելի է կիրառել տարբեր մոտեցումներով՝ պայմանավորված ուսուցանվող նյութով, աշակերտների տարիքային խմբով:

1. Ցածր և միջին դասարաններում կարելի է այն կիրառել այնպիսի ստեղծագործությունների ուսուցման ժամանակ, որոնցում կան ընդգծված դրական ու բացասական կերպարներ: Նյութի ամփոփման փուլում կարելի է գրատախտակին նկարված «Տ-աձև աղյուսակի» օգնությամբ ամբողջացնել հերոսների ընդհանրական բնութագիրը՝ մի հատվածում նշելով դրական կերպարի, մյուս հատվածում՝ բացասական կերպարի հատկանիշները: Օրինակ՝ «Հայկ և Բել» վիպերգի ուսուցման ամփոփման փուլում կարելի է աշակերտների օգնությամբ լրացնել աղյուսակը՝ առաջին հատվածում բնութագրելով Հայկին, երկրորդ հատվածում՝ Բելին:

ՀԱՅԿ	ԲԵԼ
առնական	տիտանյան
քաջ	բռնակալ
հայրենասեր	նենգ
ազատատենչ	խորամանկ
արդարամիտ	փոքրոգի
ուշիմ	

Մեթոդական այս հնարը կօգնի ամբողջացնելու նյութը, աշակերտների տեսողական հիշողության մեջ ամրապնդելու ստեղծագործության կերպարների նկարագիրը, երկի գաղափարական հարցադրումները:

2. Բարձր դասարաններում այն կարելի է կիրառել նույն թեմայի՝ տարբեր հեղինակային մշակումների ուսուցման ժամանակ: Օրինակ՝ «Քաջ Նազար» հայկական ժողովրդական հեքիաթի թումանյանական և դեմիրճյանական մշակումների զուգադիր վերլուծությունը կարելի է ամփոփել «Տ-աձև աղյուսակի» օգնությամբ: Ուսուցիչը, բացատրելով հեքիաթի գրական մշակման երկու տարբեր մոտեցումները՝ հավատարիմ մնալ հեքիաթի ժողովրդական տարբերակին կամ հեռանալով հեքիաթի բովանդակային նկարագրից՝ բերել նոր կերպարներ ու նոր հանգուցալուծումներ, պետք է նշի, որ Թումանյանը հեքիաթը մշակել է առաջին տարբերակով, իսկ Դեմիրճյանը՝ երկրորդ: Աղյուսակի առաջին հատվածում կարող են նշել Թումանյանի՝ հեքիաթի գրական մշակման առանձնահատկությունները. պահպանվում է հեքիաթի ժանրը, Քաջ Նազարը մինչև վերջ մնում է գահին, Նազարի կինը անանուն է, նազարականությունը դիտարկվում է որպես հավերժական իրողություն: Աղյուսակի երկրորդ հատվածում կարող են նշել դեմիրճյանական մշակման առանձնահատկությունները. փոխվում է ժանրը՝ կատակերգություն, տարբերվում է հանգուցալուծումը. Նազարը գահընկեց է լինում, Նազարի կինը ստանում է անուն՝ Ուստիան, փոխվում է նազարականության հանդեպ դեմիրճյանական փիլիսոփայությունը. պետք է պայքարել այդ արատավոր երևույթի դեմ և արմատախիլ անել այն: Այդ է պատճառը, որ Դեմիրճյանի մոտ Նազարը գահընկեց է լինում:

Ուսուցման այս եղանակով աշակերտների մոտ ավելի կամրապնդվեն նյութը, աղյուսակը՝ տպավորվելով աշակերտների տեսողական հիշողության մեջ, ինչն էլ կնպաստի թեմայի խորքային ընկալումներին։

3. «Т-աձև աղյուսակ» մեթոդական հնարը կարելի է կիրառել բանավիճային գնահատումների տեղիք տվող ստեղծագործությունների ուսուցման ժամանակ։ Աղյուսակի երկու տարբեր կողմերում աշակերտները կարող են գրել իրենց դիտարկումները՝ հիմնավորելով կերպարի բնութագրումներին առնչվող իրարամերժ կարծիքները։ Օրինակ՝ Ա. Շիրվանզադեի «Քաոս» վեպի ուսուցման ժամանակ՝ Մարկոս Ալիմյանի կերպարը վերլուծելիս, տարակերպ գնահատումների կարժանանա Ալիմյանի կողմից ավագ որդուն՝ Սմբատին ուղղված որոշումը՝ բաժանվել ռուս կնոջից և հայ եկեղեցու օրենքներով ամուսնանալ հայուհու հետ։ Աշակերտների մի խումբը չի ընդունի հոր այդ հրաման-հորդորը՝ հիմնավորելով, որ ճիշտ չէ պահանջել փլուզել ռուս կնոջ հետ կազմված ընտանեկան միությունը, առավել ևս, որ նրանք ունեին երեխաներ, որովհետև սերը ազգային սահմաններ չի ճանաչում, և չի կարելի աղարտել ընտանեկան ներդաշնակությունը՝ ազգային պատկանելության խնդիրը դարձնելով գերագույն արժեք։ Աշակերտների մյուս խումբը կարդարացնի Ալիմյանի այդ պահանջը՝ նշելով, որ, այո՛, համա-մարդկային մտածողության տեսանկյունից սխալ էր հայրը՝ ստիպելով կայացած ընտանիքի փլուզում, որովհետև, այո՛, սերը ազգային պատկանելության սահմաններ չի ընդունում։ Բայց ազգային մտածողության դիտանկյունից արդարացի էր հայրը, որը պահանջում էր ազգային հոգեկառույցի ամուր հիմքեր, որովհետև խառնածին սերունդը աղարտում է ազգային հոգեբանության, արժեհամակարգի, կենսափիլիսոփայության նկարագիրը։ Իսկ փոքր ազգերի համար դրանք կարևորագույն արժեքներ են ազգային ինքնության պահպանման, նրա ազգային տեսակի չաղարտման համար. դրանք ազգի լինելիության հիմնական առհավատչյան են։ Այդ էր պատճառը, որ Ալիմյանը ժողովրդական խոսքը դարձրել էր իր կենսափիլիսոփայության հիմքը՝ «Ճիպոտդ քոլիցդ կտրիր» [2, 312], այսինքն՝ հայ տղամարդը պետք է ընտրի հայուհուն՝ որպես իր ընտանիքի հոգևոր սյուն...։ Միայն այս դեպքում կստեղծվի ազգային ամուր հոգեկառույցով ընտանիք։

Բանավիճային նյութի նմանաձև քննարկումը կնպաստի գրական երկի առավել խորքային ուսումնասիրությանը, դասի առավել հետաքրքիր ու արդյունավետ կազմակերպմանը։

4. Մեթոդական այս հնարի օգնությամբ կարելի է տեսանելի դարձնել ստեղծագործության մեջ պատկերների խորհրդաբանության իմաստային սահմանները՝ շեշտադրելով որպես խորհրդանիշ կիրառված պատկերների գաղափարական, խոհափիլիսոփայական շերտերը։ Եթե տվյալ ստեղծագործության մեջ կան խորհրդանշային պատկերներ, որոնցում խտացված են պատումի հիմնական գաղափարական հարցադրումները [3, 110], կարելի է դրանք դիտարկել՝ «Т-աձև աղյուսակի» երկու հատվածներում ամբողջացնելով խորհրդապատկերի տարբեր դրսևորումները։ Այս եղանակով հետաքրքիր կլինի վերլուծել Հ. Մաթևոսյանի «Իմ գայլը» պատմվածքը, որում գայլապատկերը ստանում է խորհրդանշային ինքնատիպ դրսևորումներ։

«Իմ գայլը» պատմվածքում գայլի՝ որպես խորհրդապատկերի ընկալումը ունի պատկերային հետաքրքիր **ծիր՝ սկսած իրական գայլից, որը խորհրդանշում է ցավ, տառապանք, դժվարին խոչընդոտներ, մինչև մարդու ներաշխարհի գայլ՝ որպես հզոր կամքի, աննկուն ոգու խորհրդանիշ։** Եվ այս երկու գայլերի միջանկյալ տարածության մեջ են տրոհվում գայլապատկերի իմաստային խորհրդանշական հոսքերը։

Աղյուսակի մի հատվածում կարելի է ընդգծել իրական գայլի խորհրդանշային բնութագրումները, մյուսում՝ ներքին գայլի խորհրդաբանության իմաստային առանձնահատկությունները։ Ուսուցիչը պետք է բացատրի, թե ինչպես սյուժետային գործողություններին զուգահեռ բացվում է իրական գայլից մինչև ներքին գայլ խորհրդանշային իմաստների ներքին տարածությունը։ Գյուղից քաղաք գնալու ճանապարհին կատարված միջադեպերը՝ պատանու ցրտահարված ոտքի ծանր ցավ, անակնկալ հայտնված գայլից առաջացած սարսափ, բացում են **գայլապատկերի** խորհրդանշական տարածությունը, որտեղ հյուսվում է հերոսի հոգեբանական անցումների բարդ ընթացքը։ Մաթևոսյանական պատումում տեսանելի է դառնում մարդու ու ցավի պայքարը։ Ցավը հաղթահարելու ինքնաբուխ մղումը աստիճանաբար հերոսի ներաշխարհում արթնացնում է ինքնապաշտպանության ներքին բնազդը՝ վեր բարձրացնելով պատանեկան հոգում ամբարված ուժերը, որոնք պատրաստ են փշրելու արտաքին ամեն մի կապանք ու ցավի դրսևորում։ Պատանու հոգում բացվում է դեպի մի նոր ափ, դեպի տղամարդու համարձակ ու աննկուն տեսակի անցման ուղին...։ «Ես հայհոյեցի ցավին, ինչպես որ կենդանի թշնամուն կհայհոյեն» [4, 459]։ Եվ այս հայհոյանքը դառնում է պատանուց դեպի տղամարդ տանող հոգևոր վերելքի սկիզբ, որը

պիտի հոգում ավելի ուժգնանար հաջորդ փորձությունից՝ գայլի անակնկալ հայտնվելուց։ Գայլի հետ հանդիպման առաջին պահը պատումում դառնում է հերոսի հոգում ներքին գայլի արթնացման նախակետը։ Մինչ ներքին տագնապի հաղթահարման հոգեբանական վերելքը պատանի հերոսի ներաշ-խարհում բախվում են գայլից եկող ներքին վախերն ու անհանգստությունները։

Ուսուցիչը պետք է բացատրի, որ մաթևոսյանական խոսքում պատկերակերտման հետաքրքիր միավոր է դառնում տեսիլը, պատումի հյուսվածքում այն դառնում է հերոսի հոգեբանական վայրիվերումների բացահայտման գեղագիտական տարածություն։ Վախի ու սարսափի ալիքներում գրեթե անզգայացած պատանու մտապատրանքում արթնանում է անցյալում մնացած մի պատկեր՝ Սիմոն պապի տեսիլ-կերպարը, որը նրա ներսում ներքին գայլի արթնացման հոգեբանական սկիզբն է։ «Էն հին ժամանակներում Սիմոն պապի ծունկը ճապոնացիները հանել դրել էին իրենց գեներալի ծնկի մեջ, իրեն ասել էին՝ դու գնա։ Դա ես լսել էի այն ժամանակ, երբ փոքր էի, նիհար երեխաներս ցուրտ դասարանում սարսափելի բաներ էինք պատմում, և ուրիշի ցավից կուչ էինք գալիս և սեղմվում սառը վառարանին» [4, 460]։ Հեռավոր հույզերի ալիքներում մնացած զգացողությունը՝ ուրիշի ցավից կուչ եկած մարմնում անթեղված ներքին ցավի սարսափը, միահյուսվելով Սիմոն պապի տեսլապատկերին, նրա հոգում արթնացնում է անմեկնելի մի զգացում...։ Կարծես պապից իրեն է փոխանցվում ցավն ու վախը հաղթահարելու այն ոգեղեն ուժը, որը պապին օգնել է դիմակայել, հաղթել դաժան ցավին և ապրել...։ Արյան կանչի ներքին մի մղումով հոգում արթնանում է պապից իրեն ուղղված աննկուն ու ուժեղ լինելու լուռ հրամայականը։ Պապի տեսլապատկերին միահյուսվում են փոքրիկ քրոջ գորովագութ ժպիտի քաղցրածոր պատրանքը, թախտին հոգնած թիկնած հոր հոգացող հայացքը...։ Եվ սիրելիներից եկող այդ հուզառատ ալիքները տեսիլի թևերին կարծես տանում են նրան ոգեղեն մի եզերք, որտեղ նա ամենազոր է, որովհետև թիկունքին հարազատների ներքին կանչն է՝ սիրո, նվիրումի, հոգածության անսահման ուժով առլեցուն։ Թեև պատանու ճանապարհին հայտնված գայլը երկյուղ էր առաջացրել նրա հոգում, այնուամենայնիվ նա կարողանում է հաղթել գայլին, իսկ պայքարի ողջ ընթացքը դառնում է պատանի հերոսի ներսում ինքնահաստատման, կամային ուժեղ զգացողությունների արթնացման, ցավի ու վախի հետ հարաբերվելու նոր եզրերի բացահայտում։ «Ողնաշարը ջահել կաղնու նման ճկած, մատները կեռած այդ երեխան քայլերը դնելով հատ առ հատ, ամեն քայլի հետ կարծրանալով ու մեծանալով, մղվեց դեպի գայլը։ Գունատ աչքերն այդ անասունի անմիտ նայվածքին՝ երեխան գնաց խեղդելու նրան» [4, 460]։ Պատկերի մեջ խտացված են և՛ հերոսի հոգեվիճակի, և՛ ներքին հույզերի բախումների, և՛ աշխարհընկալման անցումային սահմանները։ Մաթևոսյանական պատումում գայլապատկերը ստանում է ժամանակի ու տարածության հետաքրքիր խաչաձևումներ։ Գայլի հետ պայքարում ամեն քայլի հետ մեծանալով ու կարծրանալով՝ պատկերային տարածությունը իրար է կապում ներկայի ու ապագայի տարբեր ճանապարհներ, որոնք խաչվում են նույն կետում։ «Երեխան հիմա կանգնած է նրա տրորած տեղը, շտկվել էր, մեծացել, հաղթել, հիմա քսան-քսանհինգ տարեկան գյուղացի մարդ էր» [4, 460]։ Տարածական նույն կետը, որտեղ իրական գայլի հետ բախումից հոգում արթնացել էր ներքին գայլը, դառնում է կյանքի շրջանագծի հատման այն կետը, որը միացնում է հերոսի հոգու վերելքի ճանապարհի նախակետն ու հանգման կետը։ Տարածական այդ կետից սկիզբ առած կամային հզորացումը տարիների պտույտի մեջ ստեղծել է այն ուժեղ գյուղացուն, որը հաղթել է կյանքի մատուցած բոլոր դժվարությունները և դարձել առնական տղամարդ, գյուղացի մարդ՝ արարման վեհագույն խորհրդի ուժով, հայրենի հողի անքակտելի կապի գիտակցմամբ։ Գայլապատկերի մեջ Մաթևոսյանը բացում է հզորացման այդ ճանա-պարհի այն կենսական ակունքը, որը օգնում է հոգում արթնացած ներքին գայլի կատարյալ հաղթանակի կայացմանը։

Ուսուցիչը պատմվածքը վերլուծելիս պետք է ընդգծի, որ պատումի մեջ, գայլապատկերի իմաստային հոսքերի զարգացումներին զուգահեռ, տեսանելի են դառնում այլ խորհրդանիշ-պատկերներ, որոնք կենսական ազդակներ են տալիս հերոսի հաղթական վերելքի ճանապարհին։ Գայլի հետ պայքարի ընթացքում հերոսի մտապատրանքներում հյուսված տեսիլ-կերպարների (պապ, հայր, մայր, քույր) կողքին կա մի շատ հետաքրքիր կերպար՝ փոխնձի-ձավարի-հացի տոպրակը։ «Տոպրակ ջան,– ասաց նա և լաց եղավ,– ուզում է ինձ ուտի։ –Իսկ գայլը դեռ պարում էր մոտենալով ու հեռանալով։ Երեխան տոպրակին պատմեց, որ գայլն ուզում էր իրեն խաբել։ Իրեն խաբել, ինչպես ավանակներին են խաբում» [4, 46]։ Հետաքրքիր է տոպրակ-պատկերի խորհրդաբանության իմաստային հոսքը։ Եթե գայլը պատումի մեջ դիտարկվում է ցավի, անհաղթահարելի թվացող խոչընդոտի խորհրդանիշ, ապա տոպրակը՝ երկրային ճանապարհը ճիշտ, ազնիվ, արդար աշխատանքով, արարման ուժի մղումներով անցնելու կյանքի հրամա-

յականի խորհրդանիշ։ Հացի, փոխնձի տոպրակը դառնում է այն մաքրամաքուր կեցության ձևի խորհրդանիշ, ուր կա մարդու ու հացի ներդաշնակ ճանապարհը. դա տքնաջան աշխատանքն է, հողի հետ հարաբերվելու, արարելու ինքնաբուխ մղումը, հողից բերք ու բարիք ստեղծելու, հողի ձայն ու շնչառությունը զգալու բերկրանքը։ Գայլից ահաբեկված երեխան տոպրակին պատմում էր, որ գայլն ուզում է իրեն խաբել։ Երեխայի տագնապած խոսքի խորհրդաբանական ենթաշերտերում ցավին ու տառապանքին գերի դառնալու մարդկային ներքին տագնապն է. արդյո՞ք ինքը կկարողանա հաղթել ցավը, հաղթահարել կյանքի դժվարությունները և այդ ընթացքում չխաբվել կույր մոլորություններով ու հեռանալ մարդկային ճշմարիտ արժեքներից։ Հացի տոպրակի խորհրդաբանության իմաստային հոսքը նույնանում է մարդու հոգում ներքին գայլի խորհրդանշային ընկալումներին։ Պատկերի մեջ շարունակվում է տոպրակի խորհրդանշանակացման ընթացքը։ Երեխան շալակում է տոպրակը՝ որպես նվիրական արժեք, և հեռանում։ Գայլը հետևում է նրան. «Գայլն անկամ հետևեց նրան՝ հուսալով, թե ճանապարհին կգտնի իր անելիքը։ Որսը կանգ էր առնում. գայլն էլ էր սպասում, որսը շտապում էր, գայլն էլ էր շտապում։ Հիմա թելադրողը որսն էր և ենթական գայլը։ Որսը շուռ եկավ և ասաց. –Ի՜նչ ես ուզում, անասուն։ –Գայլն էլ կանգնեց ու, մի կարգին չհասկանալով, դեսուդեն նայեց։ Որսը շալակը մեջքին շտկեց ու գնաց՝ էլի բանի տեղ չդնելով գայլին, և գայլը նրան հետևեց որպես ճանապարհի սովորական ընկեր» [4, 46]։ Հիմա թելադրողը հերոսն էր, գայլը՝ նրա ենթական...։ Այսինքն՝ կյանքի դժվարություններից չընկճված ու այն հաղթահարելու կամային ուժ գտած մարդն այլևս չի վախենում դժվարին խնդիրներից, և ինքը կարողանում է դառնալ իր ուղին կերտող, ինքնուրույն ճիշտ որոշումներ կայացնող, վճռական ու խոհուն անձ, որի իմաստնության ու մտքի առաջ ստրկանում են կյանքի խոչընդոտներն ու դժվարությունները, ինքն է իր նպատակի ու երազանքի իրականացնողը...։ «Որսը շալակը մեջքին շտկեց և գնաց գայլին բանի տեղ չդնելով» [4, 461]։ Այո՛, որքան էլ ծանր լինի շալակի տոպրակը՝ արդար ու ազնիվ աշխատանքի բեռը, պետք է դիմանալ, պետք է ժամանակ առ ժամանակ շտկել երանելի հոգնությունից կքած մեջքը, մեղմել մարմնի ու մտքի խոնջանքը և համառ ու ինքնավստահ շարունակել ճանապարհը՝ արհամարհելով կյանքի խոչընդոտներն ու դժվարությունները։ Այս դեպքում գայլը դառնում է ճանապարհի սովորական ընկեր, դյուրին է դառնում կյանքի դժվարությունների հաղթահարման ընթացքը, իսկ հաղթանակի պտուղները՝ ավելի ցանկալի ու հաճելի։

Ուսուցիչը, բացատրելով գայլապատկերի խորհրդաբանության իմաստային շերտերը, աղյուսակի երկու կողմերում նշելով իրական գայլի ու ներքին գայլի խորհրդանշային դրսևորումները, պետք է ընդգծի պատմվածքի դաստիարակչական նշանակությունը. չպետք է կյանքի դժվարություններից երկնչել, չարանալ, գերի դառնալ վատ ու անազնիվ մղումներին, այլ ցավից ու տառապանքից էլ ավելի ուժեղանալ, կամային ուժեղ դրսևորումներով հասնել երազանքին և ապրել գեղեցիկ ու ազնիվ...։ Ուսուցիչը կարող է հիշեցնել հնդկական առակը, որը նույն խորհուրդն ունի։ Ըստ հնդկական առակի՝ մարդու ներսում ապրում են երկու գայլեր. նրանցից մեկը չարիքն է, վախը, զայրույթը, նախանձը, վրդովմունքը, ագահությունը, եսասիրությունը, անխղճությունը, ամբարտավանությունը, մեղքը, մյուսը՝ բարիքը, ուրախությունը, խաղաղությունը, սերը, հույսը, ողորմությունը, առատաձեռնությունը, ճշմարտությունն ու հավատքը։ Միշտ հաղթում է այն գայլը, որին կերակրում ենք [5]։

Եզրակացություն: «Տ-աձև աղյուսակ» մեթոդական հնարի կիրառումը նպաստում է ուսուցանվող նյութի առավել խորքային վերլուծությանը, աշակերտների կողմից նյութի տարաշերտ ու ընդգրկուն իմացությանը, գեղարվեստական ստեղծագործության լայնածավալ ներկայացմանը, դասը առավել հետաքրքիր ու բովանդակալից դարձնելուն։

Օգտագործված գրականության ցանկ

1. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, վարժություններ, հնարներ, Վանաձոր, 2008։
2. Շիրվանզադե Ա., Երկեր, հ. 3, «Սովետական գրող», Երևան, 1987։
3. Լոտման Յ., Միֆ, անուն, մշակույթ, Ստեփանակերտ, 2012։
4. Մաթևոսյան Հ., Երկեր, հ. 1, «Սովետական գրող», Երևան, 1985։
5. https;//www.internest.am.

Получено: 15.10.2022 *Received 15.10.2022*
Рассмотрено: 22.10.2022 *Reviewed 22.10.2022*
Принято: 27.10.2022 *Accepted 27.10.2022*

Journal ''Education in the 21st Century'', Vol1-8/2/, 2022

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License